

մինչ էր ի Զմիրունիա՝ գրէր առ նա գալ առ ինքն զի տօն մեծի Զատիկին ի միասին արասցուք. և միշտ յսպասելն ճանապարհի նորա ս՛հ Մատթէոս հառաչելով և որդւոյն կտակ առնելով՝ յանձն արար զՏոգի իւր ի ձեռն հրեշտակին մարդասէր խնամոցն: Իսկ յետ ութ աւուրց ապա եկեալ էհաս Մատթէոս Զէլէպի յԱնդրիանուպոլիս՝ անգիտացեալ զմահուանէ հօրն իւրոյ: Աւտի յայսմ ժամանակի եպիսկոպոս, վարդապետ, քահանայք, և տանուտեարք եկեալ միւթարութիւն մատուցին նմա ըստ արժանւոյն: Եւ Աստուծօր գրող նախկին պատմաբանն (ընդ զժումը մերն է) զանուն իւր յայտնէ՝ զոյ Էրեմիա իրբ. զԷրեմիա մարգարէ պատմող գրող ինքեանն այսպիսի անցից անցելոց, որպէս վիպեալ էր Էրեմիա մարգարէ սքանչելի իմն գրով զանցս Ս. Երուսաղէմի ի բարեկրօնական բռնութենէ:

Աւտի յորժամ լուա ի Փիլիպուպոլիս ժողովուրդք գամենեցոց, թէ եկեալ է Մատթէոս Զէլէպի յԱնդրիանուպոլիս, զիր միւթարութեան յղեցին առ նա վայելուչ պատուատիրութեամբ, եթէ քահանայք և եթէ զլիաւոր տանուտեարք ի ձեռն պատշաճաւոր անձին՝ պատմաբանելով նմա զերախտիս հօրն իւր և սակաւ ինչ դրամ յառաջագոյն յղեն. և զբովանակ ծախսն հատուցանել խոտանայն. և ի ցուցանելն զհաշտագիրն թէ զնացեալ է ի պէտս եկեղեցւոյ շինութեան հազար վեց հարիւր երեսուն և վեց մատչիլ (1636 մատչիլ կամ դրոշ) ինքն Մատթէոս Զէլէպին վասն այսր պատճառի զհօրն արարեալ կտակն ամբողջապէս հատոյց եկելոց՝ զգոյն հարազատ որդւոյ և նման հօրն իւրոյ հաստատելով: Ապա յորժամ հասին ի Փիլիպուպոլիս այսօրիկ երեւելի անձինք բազում շնորհակալութեամբ զպարոն Մատթէոս Զէլէպւոյն բողոքն եւս կարի շնորհակալ լեալ՝ զաղօթօս, պաղատանս առ Աստուած մատուցին և դարձեալ զգիր շնորհակալութեան յղեցին առ Մատթէոս Զէլէպին պատմելով անդ զբնաւ անցս անցելոց ընդ անձինս իւրեանց և ի վախճանի եկեալ ի Փիլիպուպոլիս՝ զոչ գտանելն իւրեանց զժամատեղիս և զտացման պատճառ տոյն եկեղեցւոյս՝ զԱբրահամ Զէլէպի զհայրն իւր. և զի ի միջի իւրեանց զբառասուն և ութ մատչիլ ընդ հարիւրի ժողովելն վասն նորոգման. և այն անբական զոլ տեսնելով՝ ի մտաբերելն յանձնս ի յեռամատարան եկեղեցւոյ Ամենասուրբ Աստուածածնի և միշտ անարատ կուսի:

Որ արդ համառօտեալ ի դիւրութիւն իմաց-

ման հասարակօրէն յԱնդրիանուպոլսոյ Մետրոպ եպիսկոպոսէ ի թիւ հայոց հազար երկու հարիւր եօթանասուն և եօթն (1277—1828) և ի յունիսի վեշտասներորդն (16) ի Փիլիպուպոլիս:

Իսկ արդ՝ վերստին առօրինակեալ այս ի նոյն օրինակէ անտի ի Պետրոս Գարէս Տէրայ Ստեփանեան բնիկ Անդրիանուպոլսեցւոյ ի թիւ Հայոց՝ ՈՒՄՂԻՆ (1828):

Աշխարհագրական և ուրիշ ինչ ինչ սխալները համառօտագիր Մետրոպ եպիսկոպոսի կը վերաբերին. — Կամենիցէն Սպիտակ ծով և Մեջերկրական երթալ անկարելի էր... ոչ թէ փախչիլ այլ ճամբորդելն անգամ:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

ԳԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

« ՀԱՅՏԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ » ՈՒՆ՝

(Շար. տես Բագմ. 1927 էջ 179)

ԼԹ. — Գազազիլ (էջ 49).

« Գազազիլ »ը զայրանալ մեկնած է: Բայց կարծեմ եթէ ըովի հնկական բառն ալ մեկնած ըլլար՝ իմաստն աւելի որոշ պիտի գտնէր: « Գազազիլ » ուրեմն, առանձին չէ որ բարկանալ, նեղսրտիլ կը նշանակէ, այլ հնկայի հետ: Հնկայ, կամ հուճապ, յգ. հաւանաբար արբ. յօրք ըսել է: Աւտի « գազազիլով ընդ հնկական », համազօր կը զբտնեմ հայկական « գյօսեակ պոստեկ » ոճին, այսինքն՝ յօնքերն ամբողջիլ, ընթուինները ժողովելով՝ լուրջ ու խիստ կերպարանք մ'առնուել: Հմմ. Առնեակ բոզգ. « պոստեակ »:

Խ. — ԳուՆ (էջ 50).

Ասոր արմատն ալ պարսկերենի մէջ կը փնտռէ. բայց ի զուր: « Բնար »ը « Գնար » զբողբ, (տ. Աճառ. 41), շատ լաւ կրնար « բուն »ն ալ « գուն » գրել: Բառն, ուրեմն, բուն է: « Հեծիբ, որդեակ... ինչի՞ գուն ես », ըսել է « Հեծիբ, տղաս... ինչ կը քնա-

1. Հր. Աճառեան. Տպ. վենետիկ Ա. հտ. 1913. Բ. հտ. 1926.